

Եւ զսուրբ Գրիգորի Լուսաւորչին որ վկայաւք
ստոյգ նորա ճկողմն առ մեղ է նախնեւք զայն
ի խնդրոյ եպիսկոպոսիս եւ սուրբ միաբա-
նացս ընծայեցաք ի սուրբ կաթուղիկէս եւ
այլ արդիւնս: Տէր Յովանէս եւ միաբանքս
սահմանեցին տաւն սուրբ Գրիգորի Ծակա-
մբտին շաբաթ աւրն եւ զշաբաթ եւ զկիւ-
րակէն զամէն եկեղեցեացս պատարադն մեղ
առնեն: Եւ ետուն մեղ տուն եւ այգի, զինչ
էլ միաբանից: Կատարիչքն աւրհնին յԱս-
տուծոյ» (Թ. 239 էջ 66, Արարատ 1887 էջ 31,
Ջալալեան, էջ 71 եւ Brosset էջ 17):

Սադունը հոն կը դնէ Ս. Բարթուղիմէոսի Աջը (Մաղաքիա արեւոյ, Պտմ. էջ 41):

Հաղրատովանքը դեռ կանդուռն է: Կը պատմէ իր արդիւնաւոր անցեալը: Կը ծրագրէ⁶ արդեօք Զարթօնք մը անսպասելի:

ՍԱՆԵՀԻՆԻ ԵՒ ՀԱՂԲԱՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայաստանի վանքերն ու եկեղեցիները
իրենց պատմութիւնը իրենց դռներու ճա-
կատներուն, ներքին եւ արտաքին պատերուն
եւ կամարներուն, ինչպէս նաեւ շրջաքակե-
րուն մէջ դռնուած շիրմաքարերուն վրայ
մեզի ստէպ աւանդած են : Այս է՝ անոնք օժ-
տուած են զանազան արձանագրութիւններով ,
որոնց մէջ յիշատակուած են անոնց շինու-
թեան թուականները, իրենց յարակից պարս-
կաներով բարերարներով ու անոնց ըրած
նպատակները, դարձեալ փախադարձաբար
ընդունած հոգեւոր ու բարոյական բարիք-
ները, մարթանքները ու հակառակէն նշովք-
ները : Անոնք նոյնիսկ իրենց սիրուն տառերով
եղած են յաւելադիրները գեղեցկութեան եւ
զբաւ հոթեան :

Սակայն ինչպէս բնութիւնն ու փարդը
թուղթին եւ զրքին երբեմն ակամայ եւ եր-
բեմն ալ ուղեւով՝ ֆնասած, այսպէս ալ՝ Ժա-
մանակի հոլովոյթի եւ Թաւալումի ընթաց-
քին արձանագրութիւններէ շատեր եղծուած
ու ապականած են: Աղետաւրից գէպքեր եւ
երկրաշարժեր, թշնամիներու ասպատակու-
թիւններ ու ատելութիւններ, նոյն իսկ տէ-
րերու շահասիրութիւններ եւ անփութու-
թիւններ քանի՛ քանի՛ վանքեր եւ եկեղեցի-

դարձ Կոնստանդ վանքերը» (Հանդ. Աժս. 1891, էջ 193) :

ներ աւերակներու կոյտերու վերածած են, արձանադրութիւններ կողո քարեր հողերու տակ ծածկած, ցրած, ասղին անդին տարած, ուրիշ շինութիւններու կառուցումին կիրարկած եւ կամ ոտքերու տակ մաշեցուցած՝ առանց իրիզ ընելու թէ ի՛նչ ծախքերով եւ ի՛նչպիսի նպատակներու համար անոնք կոկկուած, քանդակուած ու գրուած են: Բայց բարեբախտօրէն դնուած են անձեր, որոնք զանոնք գնահատած ու ակահայտած են իբրեւ նախնիներու անդարձներ ու մասունքներ: Նմանապէս անձեր, — յաւէտ երախտապարտ մնալու ենք անոնց — որոնք յոգնութեան ու տաժանքի յանձնառու՝ այդ արձանադրութիւնները կարդացած են եւ զանոնք թուղթի ու մամուլի յանձնելով կորուստէ ազատած եւ հանրութեան մատչելի բրած:

Ստանալին եւ Հաղբատ վանքերու արձա-
նադրութիւնները կարգացած ու մեղի աւան-
դած կամ հրապարակած են .

1. Յովհաննէս Ղրիմեցի - Պատմութիւն
հռչակաւոր վանից Հաղբատայ սուրբ Նշա-
նին, Թ. 239 Զեռադէր Նոր Զուլայի:

2. Բրուսէ Մ. որ հրատարակած է վերո-
 յիշեալին երկին մէջ զանազան արձանագրու-
 թիւները կցեղով զիտողութիւններ (Հմմտ.
 Description des monastères Arméniens
 d'Haghat et Sanahin. S. Pétersbourg
 1863 :

3. Յ. Ոսկերիչեան Յ. — Թ. 513 Ձեռագիր վեհեր. Մխիթարեան Մատենադարանի (Հմմտ. Տաշեան Հ. Յ. Մայր ցուցակ վեհեր. Մխիթ. Մատ. էջ 984) հրատ. Կոստանկ Հայոց աշխարհի 1890, Գ. էջ 305:

4. Զալալեան Ս. Վ. Ճանապարհորդու-
թիւն ի Մեծն Հայաստան, Տիփլիս, Ա. 1842

5. Երզնկեանց Ռ. - Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ ... Վաղարշապատ 1886 (օգտուած էմ Արարատ ամսագրէն, 1886-8) :

5. Լալայեանց Ե. Բորչալուի գաւառը
(Ազգր, Հանդէս 1901, Է-Ը):

7. Յարութիւնեան, Սահաճին (Աղղը. Հանդէս 1898, Գ.) :

8. Քաջբերունի, ձանապարհորդական
նկատողութիւնք (Արձապանք 1884) :

9. Յովսէփեան Գ. արքեպ. Նիւթեր եւ
ուսումնասիրութիւններ Հայ արուեստի եւ
մշակույթի պատմութեան, Ա. Պրակ Երուսա-
ղէմ 1935 :

10. Հաճադարեան Կ. Սանահինի վանքը
և Զրա արձանադրութիւնները, Երեւան
1957¹ :

11. Կոստանեան Կ. Վլմական տարեգիր, ցուցակ Ժողովածոյ արձանագրութեանց Հայոց, Պետերբուրգ 1913:

12. Եղիազարեան Հ. Սանահին (Հմմտ.
Էջմիածին ամսագիր 1958):

Կոստանեանի այս հրատարակութիւնը, բաղձալի էր՝ թէ կատարեալ հաւաքածոյ մ'ըլլար, դժբախտաբար ունի բաւական թիւ-րութիւններ (հմմտ. Ղաֆաղաբեան, Սա-նահնի վանքը... էջ 70) եւ յոյժ ցանկալի է հայ բոլոր արձանագրութիւններու լիակա-տար համեմատական հաւաքածոյ մը, որ մեր այս զրութեան ամէնէն կարեւոր ու դժուա-րին մասը կաղմեց, սակայն հրաժարեցանք անոր հրատարակութենէն Ղաֆաղաբեանի վերոյիշեալ հրատարակութենէն վերջ՝ յու-սալով որ ինչպէս Սանահնի արձանագրու-թիւնները այնքան լուրջ նկատողութեան եւ բժախնդիր հրատարակութեան արժանացան, նաեւ Հաղբատի արձանագրութիւններն ալ նոյն անձէն կամ ուրիշ անհատէ մը կը կար-դացուին, կը լուսանկարուին, կ'ուսումնա-սիրուին եւ յոյս կ'ընծայուին:

Արձանագրութիւններու ընթերցումը
կարծուածին չափ զիւրիւն չէ: Յաճախ անոնք
չափ զգուարին տեղեր զրուած են եւ բարձր
կամարներու վրայ, որպէս զի մարդուն
ապականող ձեռքը զիւրաւ չմերձենայ, բայց
զգոթախտաբար աւելի ստէպ ցած ու աչքի
զարնող տեղեր, որպէս զի աչքը տեսնէ եւ
սիրտը յիշէ: Դարձեալ զրուած են իրարու
չափ մօտ եւ կցուած տառերով եւ զարդե-
րով, որով զգուարնութեանելի: Ժամանակն
պլ զբաժնէ իր ապականաբար զընծիւ, մար-
դուն որքն ու ձեռքը կատարած են իրենց

1 Կ. Ղաֆադարեանի այս կարեւոր գրութիւնը
անու յետադային Հ. Եղիգարեանի շահեկան յօդուա-
նակաբեր «Էկսիթիւ» ամսագրի մէջ (սկսած 1958
թ. 4-րտոսէ, Թ. Ը) Մանասէի եւ անոր արձանագրու-
թիւններու մասին՝ շատ ուշ ստացած բլլագրով, չեմ
կրցած այս ուսումնասիրութեան մէջ անոնցմէ չար-
կաւոր չափով օգտուիլ եւ անոնց վարկածներու
կիսամամբ արտայայտուիլ:

աւելրիչ դերը, մաշցուցած, կոտրած, ու սրբած: Ուստի զանոնք կարդարու համար հարկ է ունենալ յոգնելու տրամադրութիւն, ուշիղ զիտաւորութիւն, ծանօթութիւն հնա-դրութեան, եւ հնախօսութեան, հմտութիւն պատմական անցքերու եւ անձերու:

Մասնատրեւով մեր խօսքը Գոռգարքի վանքերու եւ յատկապէս Սահաճին ու Հաղբատ մենաստաններու արձանագրութիւններու վրայ, ի՛րարացնենք Գ. Սարգիսեանի սա խօսքերը.

«Կոստանդնուսյի կատարած աշխատանքը — վերական Տարեգիրը — Բարձրաբանի (կը յաւելուն Սանահինի եւ Հաղբատի) վեր-
մագրութեան նկատմամբ որ եւ է ար-
ժէքից զուրկ է, որովհետեւ օգտուե-
լով Զալալեանից, հարազատ չէ մնացել
սկզբնաղբիւրին, քանզի կերպով ուղ-
ղել է արձանագրութիւնները, կրճատել
է դրանք, բայց է թողել ամբողջ հա-
տուածներ եւ այսպիսով արժէքաղբիւր
իր բերած նիւթը: Ինչ վերաբերում է
Զալալեանի պէտք է ասել որ նոր վերծանու-
թիւնները շատ սակաւ բացատրութեամբ
սխալներ եւ տարբերութիւններ ունեն վեր-
սխալներ համեմատութեամբ, մանա-
ւանդ յատուկ անունների ընթրցման մէջ»²
(Էջմիածին, ամսագիր, 1951, Թ-Ժ. էջ 40):
Տարիներ առաջ Քաջուհի Զալալեանցի
սխալներն երեսուն կը հանէր եւ կը հա-
ղբագրէր թէ Հաղբատի ու Սանահինի
մէջ իրենք ըսած կ'ըլլան թէ Զալալեան
ինքը անձամբ իր յառաջ բերած արձա-
նագրութիւնները չէ կարդացած: «Այլ ուղ-
ղակի օրինակել է Շնորհացի Յարութիւն,
եպիսկոպոս Տէր Բարսեղեանի ձեռագրից,
որ ինչպէս ասում են առնուած է Ղրիմեցի
Յովհաննէս վարդապետի Ձեռագրից որ կաղ-
մել է վերջինս եփբեմ կաթողիկոսի այս տեղ
եղած ժամանակ» (Արձագանք 1884 էջ 628):
Ղաֆաղարեան ապացոյցներով կը հերքէ այս
արտայայտութիւնը եւ կ'եզրակացնէ «Զալա-
լեանց Ղրիմեցուց չի արտաղբել իր արձա-
նագրութիւնները, այլ ինքնուրոյն կերպով
պատերից ընդօրինակել» (Սանահ) նի վան-
ք... էջ 67): Իսկ Յովհ. Ղրիմեցուց համար

2 Հետևաբար գլուխաթեմեր եւ կասկածով
միջոցներով է արձանագրութիւններու ընթերցումն
լուծելու եւ անոնց հարադատութեան (համտ. Արմա-
րուս 1888, էջ 645 և Mélanges Asiaticques... Bul.
de St. Pétersbourg 1863, t. IV, p. 612) :

